№ 130 Օգոստոսի 7 (19) 1879 Օգոստոսի 7 (19) № 130

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարեկանը 6 րուբլ

[illegible]

[illegible]
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է ամեն օր 10—2 ժամ
[illegible]

[illegible]

[illegible]

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

[illegible]

ՄԻ ԽՈՐՀՈՒՐԴ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԵՐԻՆ

—

Մշակի փոքրիկ հաւաքի պա-տարին առաւօտեան մէջ մենք կը տպենք մեր մշտական աշխատա-կից պ. Գրիգոր Նիկողայեանի յօդուածը «Մի խորհուրդ Թիւր-քաց հայերին» վերնագրով։ Մենք կը տպենք այդ յօդուածը որպէս առաջնորդող, եթէ նրա բո-վանդակութեան մտածութիւնը չը խանգարէր։

Օրգանի մէջ կան շատ գե-ղեցիկ գատողութիւններ, որոնց հետ ծանօթանալը մենք թողում ենք ընթերցողներին։ Մենք այս-քան կասենք այժմ, որ պ. Նիկո-ղայեանի գրչածքի գլխաւոր միտ-քը եթէ ընդունենք, դա թէ Հայաստանի և թէ Թիւրքիայի համար բան կը լինէր։ Հեղինակը կարծում է որ ամենայարմար կան-գնելու Թիւրքաց Հայաստանի գե-ներալ-նահանգապետութեան պաշ-տօնի համար կը լինի եգիպտական նախկին մինիստր, Հայազգի Նու-բար-փաշան։

Մենք բոլորովին համամիտ ենք այդ մտքի հետ և չը նայելով որ Նուբար-փաշան յայտնի է որպէս անգլիական մարդ, ուրիշ կողմից նա յայտնի է նոյնպէս որպէս առա-ջին աստիճանի հայ, որպէս բարե-շնորհած մարդ և բացի դորանից փորձ նշանաւորութիւն շանի նրա կառավարչական բարձրագոյն փոր-ձառութիւնը։

Կոստանդնուպօլսոյ հասարակութեան մեր աշխատակցի մտքին, ասելով թիւրքիայի հայերի առաջնորդութիւն ենք դարձնում մեր աշխատակցի յօդուածի վրա։

Եթէ շնորհիւ Հայաստանի մէջ պէտք է նշանակուի քրիստո-նեայ նահանգապետ, ասելի բան է որ Նուբար-փաշայի պէս մի հայ, թէև անգլիական նահանգապետ նշանակուի, քան թէ բուն անգլիա-ցի խոլ դա շատ հեշտ կարող է պատահէր։

Ինչքան էլ անգլիական լինի Նուբար-փաշան, նա այնուամե-նայնիւ ազգով հայ է և կարելի է յուսալ որ չի հեռանի բուն ան-գլիական քաղաքականութեանը ի միտս հայոց ազգի շահերին, այն ինչ բուն անգլիացի նահանգապետ-ից այդ կարելի է սպասել....

Վերջապէս եթէ ցանկալի է որ Թիւրքաց Հայաստանի նա-հանգապետ հայ լինի, բացի Նու-բար-փաշայից մենք հայերի մէջ այս բոպէիս ոչ ոքին չենք ճանա-չում, որ լինէր աչքաբիր փորձած կառավարիչ և քաղաքագէտ, պե-տական մարդ։

Ի հարկէ ասելի բան կը լինէր, որ այդ պաշտօնը ստանար մի հայ, որ գէթ ոչ մի քաղաքակա-նութիւն կոչմունքն չը լինէր, բայց դա այս բոպէիս անհնարին է, մանաւանդ եթէ նա պէտք է միացնի իր մէջ այն բոլոր արժա-նաւորութիւնները, որ ունի Նու-բար-փաշան։

Այդ պատճառով Նուբար-փաշայից չէ կարելի չը ճանաչել որպէս միակ հնարաւոր կանդի-դատ Հայաստանի գեներալ-նա-հանգապետութեան պաշտօնի հա-մար։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

[illegible]

—

[illegible]

Մ. [illegible]